

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ #126, 2012-07-13

Ընթացիկ

# ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅՈՒՄ ԿԵՍԱՐՅԱՆ ՀԱՏՈՒՄՆԵՐԸ ՆՈՐԱԶԵՎ ԵՆ ԴԱՐՁԵԼ

Հայ կանանց մեծամասնությունը հետևում է այս «նորաձեւությանը»

Լուս Անջելեսում հայ կանանց մեծամասնությունը նախընտրում է կեսարյան հատումով ծննդաբերությունը: Եվ ոչ թե բժիշկների ցուցումով, այլ սեփական կամոք: Այսպիսի իրողություն է նշում ամերիկյան «Հայք» առողջապահական նախագծի համահիմնադիր, բժշկական մարդաբան Աստղիկ Վարդանյանը: Այս առթիվ հստակ վիճակագրություն չկա, բայց մարդաբանը հենվում է վերջին տարիների սեփական դիտարկումների ու հետազոտությունների վրա: Ասենք, որ 2005-ին ստեղծված «Հայք» նախագիծը զբաղվում է Լուս Անջելեսի հայ համայնքի կանանց եւ երեխաների առողջության հարցերով: Նախագիծը կարելու առաքելություն է իրականացնում հատկապես բնական ծննդաբերությունը քարոզելու հարցում՝ սեմինարների, անմիջական խորհրդատվությունների միջոցով:

Որքան էլ զարմանալի թվա, բայց ըստ Save the children հանրահայտ կազմակերպության օրերս հրապարակած տվյալների, աշխարհի զարգացած երկրների շարքում Ամերիկյան մայրական եւ մանկական մահացության ամենաբարձր ցուցանիշներն ունի: Եվ դա այն դեպքում, երբ այս երկիրն ամենախոշոր ֆինանսներն է ներդնում այս ոլորտում: Իրենք՝ ամերիկացիները այս իրողությունը փորձում են բացատրել այն հանգամանքով, որ աղքատ, ցածր եկամտով եւ ոչ բարձր կրթական մակարդակով շերտը բավական անլուրջ է վերաբերվում իր առողջության հետ կապված հարցերին: Երկրորդ կարելու պատճառը համարվում է լայն տարածում ստացած գիրությունը, եւ որպես հետևանք՝ շաքարախտի, բարձր ճնշման առկայությունը ամերիկացի կանանց շրջանում:

Աստղիկ Վարդանյանի համոզմամբ՝ վճռորոշն այս խնդիրները չեն, այլ այն իրողությունը, որ ամերիկյան հիվանդանոցներում չարաշահվում են բարձր տեխնոլոգիական միջամտությունները ծննդաբերությունների ընթացքում: Կեսարյան հատում պետք է կիրառել միայն բարձր ռիսկով հղիության պարագայում: Առողջապահության համաշխարհային կազմակերպության հաշվարկներով բարձր ռիսկով հղիությամբ կանանց թիվը չպետք է գերազանցի հղի կանանց ընդհանուր թվի առավելագույնը 10-15 տոկոսը (համեմատաբար նիհար կանանցով երկրների համար այդ ցուցանիշը շատ ավելի ցածր է): Ամերիկայում կանանց 35 տոկոսը կեսարյան հատումներով է ունենում իր զավակներին: Որոշ նահանգներում այդ թիվը հասնում է նույնիսկ 50 տոկոսի: Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը բազմիցս կոչ է արել Ամերիկային՝ վերադառնալ բնական ծննդաբերությունների ավանդույթին:

Հայտնի է, որ քայլերը, շարժվելը կարելուվում են հատկապես հղիության վերջին օրը՝ այդ միջոցով նպաստելով երեխայի բարեհաջող գալստյանը: Մակայն Գլենդեյլի հայաշատ հիվանդանոցներում հայտնված հղի կանայք հիվանդանոց ութ ղնելուն պես հայտնվում են սկզբում սայլակի վրա, ապա անկողնում: Այդպիսին են հիվանդանոցի պահանջները, որոնք, ցավոք, արվում են ոչ թե բժշկական նկատառումներով, այլ հղի կնոջ անվտանգությունն ապահովելու եւ հիվանդանոցին՝ դատական ատյաններում հայտնվելու հետահար հավանականությունից ազատելու համար: Անցանկալի են նաեւ ծննդաբերությունն արագացնելու նպատակով կնոջը տրվող դեղերը, ինչպես օրինակ՝ պիտոցինը: Այն առաջացնում է հսկայական ուժի արհեստական կծկումներ եւ դաժան ցավեր: Ցավերը մեղմացնելու համար ցավազրկող են սրսկում: Արդյունքը հաճախ լինում է այս պարագայում ամենեւին անցանկալի անզգայացումը: Եվ նման կարգի արհեստական միջամտությունները սովորաբար ավարտվում են կեսարյան հատումներով, որոնք կիրառելու անհրաժեշտությունը կարծես թե նույնպես արհեստականորեն է ստեղծվում եւ մեծ գումարներ ապահովում հիվանդանոցների համար:

Աստղիկ Վարդանյանն ընդգծում է, որ ոչ տեղին կեսարյան հատումները վտանգում են ոչ միայն տվյալ ծննդաբերության նորմալ ընթացքը, այլեւ ապագա ծննդաբերություններինը նույնպես: Դրանք լուրջ խնդիրներ կարող են առաջացնել պտղի զարգացման համար, քանի որ կնոջ օրգանիզմում արդեն իսկ խախտվել են բնական գործընթացները: Ըստ եվրոպական հետազոտությունների կեսարյան հատումները մինչեւ 10-12 անգամ բարձրացնում են մայրական մահացությունների ցուցանիշն ու հավանականությունը: Ցավոք, «Հայ կանայք եւս բնական ծննդաբերությունն իրենց համար պատիժ են դիտարկում եւ հաճույքով ընդառաջ են գնում բարձր տեխնոլոգիաներին: Կամավոր կեսարյան հատումները նորաձեւություն են դարձել, ամերիկյան համընդհանուր միտում»:

Աստղիկ Վարդանյանի համոզմամբ՝ պետք է նկատի առնել բնական ծննդաբերությունների մի շահեկան արժանիք եւս. բնական ծննդաբերության ժամանակ առաջանում են մեծաքանակ հորմոններ, որոնք կյանքի որեւէ այլ պարագայում չեն առաջանում, ինչպես՝ սիրո եւ հոգատարության հորմոնը, որ հետագայում արտահայտվում է ոչ միայն երեխայի նկատմամբ, այլեւ կնոջ ընդհանուր վարքագծում: Բնական ծննդաբերությունը նույնիսկ հոռետես ու

աշխարհի հանդեպ դառնությամբ լեցուն կնոջը բարի է դարձնում:

ԴԻԱՆԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ

---

<http://www.azg.am/AM/2012071317>

© AZG Daily, 2008